



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 25 ՄԱՐՏ, 2019

### ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 107

ԱՍՏՈՒԱԾ ԱՊԱԻԷՆ Է ԲՈՂՈՐ ՆԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Գոհութիւն յայտնեցէք Տիրոջ՝ որովհետեւ բարի է,  
որովհետեւ անոր սէրը յաւերժական է:  
Ոմանք անապատին մէջ, ամալի վայրին մէջ մոլորեցան,  
դէպի բնակուած քաղաք մը նամբայ չգտնելով:  
Անօթի ու ծարաւ մնացին,  
եւ ապրելու ամէն յոյս կորսնցուցին:  
Իրենց նեղութեան մէջ Տիրոջ աղաղակեցին,  
եւ Տէրը զանոնք ազատեց իրենց անձկութիւններէն:  
Զանոնք ուղիղ նանապարհի վրայ դրաւ,  
որպէսզի բնակուած քաղաք մը հասնին:  
Հետեւաբար թող գոհութիւն յայտնեն Տիրոջ՝ իր սիրոյն համար:  
Անիկա կը յագեցնէ ջուրի ծարաւ մարդիկը,  
եւ բարիքներով լը լիացնէ անօթիները:  
Շատեր մեղքի նամբան բռնեցին  
եւ իրենց անօրէնութիւններուն պատճառով տառապանքի մատնուեցան:  
Իրենց նեղութեան մէջ Տիրոջ աղաղակեցին,  
եւ Տէրը զանոնք ազատեց իրենց անձկութիւններէն:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

## ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

2:1-15

#### ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ (2:1-4)

Տերը ճանչցաւ մարգարէն, որ հողեղէն է, բայց նախքան անոր մօրը արգանդէն դուրս գալը սրբեց, զօրացուց, Իրը դարձուց, որպէսզի երթայ եւ ժողովուրդին պարգամէ Ասրուծոյ պարգամը, դարձի ու ապաշխարութեան հրաւերը ուղղէ, հրաժարելու իրենց սխալ ընթացքէն եւ Ասրուծոյ վերադառնալու: Մարգարէին այս պարգամները հեշտութեամբ պիտի չընկալուէր, այլ ընդհակառակը՝ անոր դէմ պիտի պարտազանդէին:

Ահա Ասրուծ կը փոխանցէ մարգարէին թէ ինչ ունի ըսելիք: «*Գնա ու Երուսաղէմի ականջներուն կանչէ ու ըսէ*» (2 հմբ): «Ականջներուն» կը նշանակէ լսելի դարձնել պարգամը: Ի՞նչ պիտի լսեն: Պիտի լսեն թէ ինչպէս Ասրուծ իր հոգածութեամբ ու սիրովը նայեցաւ ու հոգ փարաւ այս ժողովուրդին: Յիշեցնէ անոնց մանկութեան քաղցրութիւնն ու հարսնութեան սէրը (2 հմբ): Յիշեցնէ, թէ անոնք Ասրուծոյ կողմէ ընտրուած կոչուեցան սուրբ ըլլալու, ինչպէս Ասրուծ Ինք սուրբ է (3 հմբ): Անոնք եղան առաջին պտուղը, որմէ յետոյ միսները: Իսկ անոնք որոնք վնաս կը հասցնէին այդ պտուղին յանցաւոր կ'ըլլային, անոնց վրայ չարիք կը հասնէր (3 հմբ):

#### ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒՆ ՄԵՂԸՐ (2:5-8)

Արդեօք ի՞նչ էր պարճառը, որ անոնք լքեցին զԱսրուծ: Ոչ միայն լքեցին, այլ ուրիշ ասրուածներու երեսէ գացին: Արդեօք ինչո՞ւ մոռցան թէ Ասրուծ ինչպէս ազատեց զիրենք Եգիպտոսի երկրէն, անապարէն, չորութեան ու մահուան սպտերի երկրէն (5-6 հմբ): Ոչ միայն ազատեց, այլ զանոնք առաջնորդեց այնպիսի բարեբեր երկիր մը, որպէսզի անոր պտուղներն ու բարիքը վայելեն (7 հմբ): Բայց անոնք մտնան ու պղծեցին այդ երկիրը, փոխանակ վայելելու եւ այդ բոլորի դիմաց փառք փալու Ասրուծոյ (7 հմբ), ուրիշ ասրուածներու երեսէ գացին: Տակաւին, այդ ժողովուրդին քահանաները, օրէնքի ուսուցիչները, հովիւները, մարգարէները, որոնց պարտականութիւնն էր սորվեցնել, ուղղել, առաջնորդել, սուր մարգարէներէն զգուշացնել այս ժողովուրդը, ընդհակառակը՝ անոնք առաւել եւս պարճառ դարձան որ ժողովուրդը մոլորի (8 հմբ):

#### ՏԻՐՈՋ ԴԱՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԷՄ (2:9-15)

Ահա այս իսկ պարճառով Ասրուծ դաբաստան է որ պիտի փեսնէ այս ժողովուրդին դէմ: Ան կը յիշեցնէ զանոնք շրջապարող ժողովուրդներուն պարագան, ըսելով, թէ հակառակ անոնց հեթանոս ըլլալուն, անոնք հաւատարիմ են իրենց չասրուածներուն (10-11 հմբ): Իսկ Ասրուծոյ ժողովուրդը Ասրուծոյ փրութիւնը փառքը փութաւ անօգուտ, սին, մարդոց ձեռքով շինուած արձաններու, կուռքերու (11 հմբ): Ի փես այս երեսոյթին, երկինքը իբրեւ վկայ (12 հմբ): Որովհետեւ այս ժողովուրդը երկու չարութիւն գործեց. զԱսրուծ լքել եւ ուրիշ ասրուածներու երթալ: Փոխանակ երթալու կեանքի ջուրի աղբիւրին, գացին ուրիշ փեղեր: Եւ իրենց գութերը փորեցին, բայց այնպիսի գութեր որոնք փակով ծակ են, ու անոնց մէջ ջուր չի պահուիր (13 հմբ): Ասրուծ դարձեալ կը յիշեցնէ, թէ անոնք արեւնօք ծառայ էին, Եգիպտոսի մէջ, բայց հիմա չեն, բայց ինչո՞ւ կը վերադառնան այդ ծառայութեան (14 հմբ): Ահա իրենց այս ըրածին համար մարմուտեցան առիւծներու ձեռքը, այսինքն՝ թշնամիին, որոնք երկիրը պիտի աւերէին ու զիրենք անգամ մը եւս ստրկութեան փանելին (15 հմբ):